ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Տաշիր համայնքի հարգելի՛ բնակիչներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Աշխատավորների միջազգային օրվա կապակցությամբ:

Այս օրը խորհրդանշում է աշխատասիրությունը, նվիրումն ու համախմբվածությունը:

Մեր համայնքի զարգացման ու առաջընթացի հիմքում հենց ձեր ամենօրյա ազնիվ աշխատանքն է՝ լինի դա գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, շինարարության թե այլ ոլորտներում:

Ձեր ջանքերով է, որ մենք շարունակում ենք կառուցել ավելի բարեկեցիկ և ուժեղ համայնք:

Թող այս տոնը լինի նոր հաջողությունների, ձեռքբերումների և ոգեշնչման սկիզբ: Մաղթում եմ ձեզ առողջություն, անսպառ եռանդ և խաղաղ ու ստեղծագործ աշխատանքային օրեր:

Շնորհակալություն ձեր նվիրումի ու պատասխանատվության համար: